

ԴԱՐՁ

Posted on December 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Ռուբեն Յովակիմեան, ՍԵՆ Ռաֆայել – Ֆրանսիա, 6 Դեկտեմբեր 2022

**«Վերականգնուած յարաբերութիւնները
պահանջում են աւելի շատ խնամք, քան չխաղաճները»:
Լառոշֆուկո**

Իմաստուն քայլ է, երբ ոմանք, իրենց սխալ ընթացքից հրաժարուելով կամ զղջալով՝ ետ են կանգնում այդ ուղուց (անասունները չունեն իրենց վարքը մի ուղղութիւնից միւսը փոխելու այդ գիտակցութիւնը): Իր եւութեամբ, դա դէպի իրական եւ առարկայական ոլորտ դարձ է գնահատուում: Սակայն բացառուած չէ, որ խոհեմութեան բացակայութեան դէպքում, սխալի վրայ յամառելն ունենայ ցաւալի, կորստաբեր հետեւանքներ:

Կարելոր քայլ էր խորհրդարանական ընդդիմութեան վերադարձը փողոցից դէպի Ազգային Ժողովի նիստերի սրահ: Միաժամանակ, մի քանի պատգամաւոր, երկրի հասարակութեանը համոզելու իրենց ձախողանքը գիտակցելով, հրաժարուեցին իրենց լիազօրութիւններից:

Բայց դարձը չեղաւ դատարկ ձեռքերով, այլ ընդդիմադիրները ԱԺ վերադառնում են իրենց օրակարգով, որ կենտրոնացած է Արցախի ու Նրա «փրկութեան» թեմայի վրայ՝ Նախկինի նման առանց ասելու թէ ինչպէ՛ս, ի՛նչ միջոցներով: Նրանք բնաւ հետաքրքրուած չեն երկրի ուսերին բարձուած հանապազօրեայ մարտահրաւերներով, որոնք անմիջական, հրատապ լուծման կարիք ունեն: Դրանցից է հայ-ռուսական յարաբերութիւնների թուլացման կարելորութիւնը, որ սկսել է կաղալ:

Մէկ բան ստոյգ է՝ ընդդիմադիր ճակատում նորեր պիտի յայտնուեն: Պարզ չէ սակայն, թէ Նախկին աղմկարար, լպիրշ լաչառներին ո՞վ պիտի փոխարինի: Թերեւս անրջային երազանք է, որ պատգամաւորների միջեւ խոհեմ, բարեկիրթ, պատշաճ վերաբերմունքը դառնայ ընդունուած գործելակերպ՝ խարդաւանքներին ու հայիոյանքներին վերջ դնելով:

Ստոյգ է, որ խորհրդարան էին մտել ոչ թէ պատահական, այլ յատուկ ընտրուած անհատներ, աւելի ճիշտ՝ «կա՛մ կտիրենք, կա՛մ կջարդենք» կարգախօսի ջոկատայիններ, ում սկզբունքային նպատակն էր նիստերի բնական ընթացքի խաթարումը ամեն գնով եւ միջոցով, մինչեւ իսկ ծեծկռտուքով: Մեղա՛յ, եթէ սխալ եմ հասկացել:

Այն կարծիքին չեմ, թէ ընդդիմադիրների շարքերը միայն աղմկարար կիսագրագետներից են կազմուած, որոնցից ոմանք փայլում են իրենց պարզամտութեամբ, յաճախ՝ տխմարութեամբ: Վստահաբար, խելամիտ եւ կիրթ անձանց պակաս չկայ Նրանց մէջ, բայց այդպիսիք մնացել են լուսանցքում: Երկիրը որքան պիտի շահեր, եթէ ա՛յդ կարգի մարդկանցով փոխարինուէին հրաժարականի հայց ներկայացրած աղմկարարները. գուցէ որոշ հարցերի լուծումը աւելի դիւրին լինէր:

Հարկավոր էր լուրջ քննարկումներով ձգտել փոխհասկացողության՝ անդադար հակադրուելու փոխարեն:

Եթե հայեացք նետենք մօտակայ անցեալին, որոշ երեւոյթներ ակնյայտ են դառնում. 1994-ի մայիսին զինադադարի Բիշքեքի պայմանագիրը ստորագրելուց յետոյ մենք հանգստացանք, թէ Արցախի հարցը լուծել ենք, քանզի յաղթել էինք ծանր պատերազմում: Ուշադրութեան չարժանացաւ անգամ այն փաստը, որ ազերիները պայմանագիրը ստորագրեցին պարզապէս իբրեւ զինադադար՝ շարունակելով անընդհատ զինուել: Այսօր նրանք են յոխորտում, թէ Արցախի հարցը իրենք լուծել են եւ այդպիսի խնդիր չկայ: Արցախը «փրկելու» ցաւով անքուն գիշերներ անցընող այսօրուան ընդդիմադիրները, ձեռքի տակ եղած հնարաւոր լուծումները ձգձգելով, անտեսեցին մեր յաղթանակով ստեղծուած իրական վիճակը միջազգայնօրէն օրինականացնելու քայլերը, եւ դառն հետեւանքը մէջտեղն է:

Թերեւս հնարաւոր է, դարձի պայմաններում վերանայել կլանային դաշինքների կազմը, վերջ տալ «քօքից կրծելու» սկզբունքին եւ պարտականութիւնների յստակ շրջանակի մէջ տեղաւորուել՝ չմոռանալով, որ իշխանութիւններին այլախոհը գործակից է երկրի շահերի առումով, ոչ թէ թշնամի: Աւելորդ չէ յիշեցնել, որ բաւական աղմուկի առիթ տուեց ամանորի առիթով Հանրապետութեան հրապարակի վրայ տօնածառի տեղադրումը, մինչդէռ ընդդիմութիւնը աւելի կարեւոր խնդիրների մասին լռում է: Կարելոր է նաեւ նշել, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ամենամեայ «թելեթոն»- դրամահաւաքին գոյգ կաթողիկոսները թերացան՝ մերժելով իրենց ողջոյնի եւ քաջալերանքի պատգամը յղել: Այդ եւս ողջամտութեան բացակայութեան հերթական ապացոյց է:

Այս թոհուրեհի պայմաններում, մթնոլորտը պարզ եւ կատարեալ չէ նաեւ իշխանական շրջանակում: Արւում են որոշ քայլեր, որոնք պետական մտածողութեան յարիր չեն եւ կարելի կլինէր խուսափել դրանցից: Ցաւօք, միշտ չէ, որ նրանց մօտ էլ ողջամտութիւնը ներկայ է, եւ անփութութիւնը իր գործն է անում: Վերջերս յաճախ են խօսում մանկավարժներին «**ատեստաւորել**»ու մասին՝ նրանց աշխատավարձը բարձրացնելու համար: Ծրագիրը ըստ եւութեան ճիշտ է եւ անհրաժեշտ: Սակայն այդ անուանումը խորթ է եւ անընդունելի. եթէ վարչապետի շուրջը գտնուէր հայերէնին քիչ թէ շատ տիրապետող մէկը, պիտի թելադրէր այն կոչել **վկայագրում, հաւաստագրում** կամ այլ, մեր մայրենիին հարազատ բառով:

Եթէ կոշտ ու անյարգալից չթուայ, կ'ասէի, որ պատգամաւորների եւ նախարարների զգալի մասը, նաեւ վարչապետը, իրենք «**ատեստաւորման**» կարիք ունեն, քանզի նրանց գործածած լեզուն շա՛տ հեռու է հայերէն լինելուց, մինչդէռ օրէնքը նրանց պարտաւորեցնում է իրենց աշխատանքում անաղարտ հայերէն օգտագործել: Ընթերցողը կարող է մտածել, թէ մի օտար բառի առկայութիւնը նշելը լուն ուղտ դարձնել է, բայց շեշտեմ՝ քաղաքակրթութեան օրէնք է, որ իւրաքանչիւր երկրի ղեկավար

պարտաւոր է դրօշի հետ մէկտեղ յարգել պետական լեզուն եւ միջպետական հանդիպումների ժամանակ այն օգտագործել եւ իրենց ասելիքը օտար խօսակիցներին յայտնել թարգմանիչների օգնութեամբ: Տաւօք, այդ օրինաչափութիւնը մերոնք արհամարհում են, եւ յայտնում անյարմար վիճակում: Նոյն վարչապետը մի քանի անգամ ծաղրանքի ենթարկուեց Պոլտինի եւ ուրիշների հետ հանդիպումների ընթացքին գործածած կաղ ու թերի ռուսերէնի համար, իսկ նրա անգլերէնով կամ ֆրանսերէնով ելոյթները հեռու են ընդունելի մակարդակից: Եթէ երեւոյթը աղետալի չէ, ապա պատուաբեր եւս չէ:

Մեր նպատակը մէկի կամ միւսի թերութիւնը երեւան հանելը չէ, այլ մեր երկրի պատուարժան դիրքը պահպանուած տեսնելը: Նման փոքր խնդիրները հնարաւոր է դիւրութեամբ լուծել: Բայց ե՞րբ:

44-օրեայ դժոխքի ընթացքում մեր նկատմամբ Ռուսաստանի դիրքը աւելի շատ ձեռնպահ էր, քան իսկական դաշնակցի պահուածք: Բացայայտ էր, որ ՀԱՊԿ-ի երեւանեան համաժողովին ՀՀ-ի վարչապետը գրեթէ միայնակ մնաց. այդուհանդերձ նա քաջութիւնն ունեցաւ առաջարկուող բանաձեւը չստորագրել: Մինչ այդ, ոմանք հակառուսական ցոյցեր էին անում Երեւանի փողոցներում՝ չգիտենք թէ ո՞ւմ օգտին: Վարչապետի այս դիրքորոշման հետեւանքներն անյայտ են. ՀՀ-Ռուսաստան յարաբերութիւնները կարող են է՛լ աւելի սուր բնոյթ ստանալ: Անհրաժեշտ է այս հարցում խոհեմ եւ զգոյշ լինել:

There are no comments yet.